




Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարեկանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:
Մեր հասցեն. Типографія Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:
Յայտարարութիւնների համար վճարում են
Խաւարանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆՈՒԿՈՒԹԻՒՆ

Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պետական բանկի բա-
միւնը Երևանում. Նամակ Զահուկից. Նամակ
Խմբագրին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Նամակ Թիֆլիսից. Արտաքին լուրեր.—
ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-
ԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Հայ ազգագրու-
թեան խնդիրը.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԲԱՅՈՒՆԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Մենք արդէն հաղորդեցինք մեր լրագրի ան-
ցեալ համարներէն մէկում, որ մտադրութիւն կայ
Երևանում բանալու պետական բանկի բաժան-
մունքը: Լուր եկե՛ք, որ ֆինանսների մինիստրու-
թիւնը այդ հարցի առիթով տեղեկութիւններ է
ուղղել Թիֆլիսի պետական բանկի բաժնի կառա-
վարից: Թէ ինչ հայեացքներ են յայտնել ֆինան-
սական մինիստրութեան կողմից օրգանները և
ներկայացուցիչները այդ խնդրի մասին,—մեզ
յայտնի չէ առ այժմ. սակայն չենք կարող ան-
կեղծօրէն չը ցանկանալ, որ Երևանում պետական
բանկի բաժնի բացումը, որքան կարելի է խուչ-
դտներէն չը հանդիպէր, և որքան կարելի է չու-
տով իրագործվէր: Մեր այդ ցանկութիւնը լոկ մի
բարի ցանկութիւն չէ ֆինանսական օպերացիա-
ների յարմարութիւնների վրա հիմնված, այլ մի
այնպիսի ցանկութիւն, որը կապված է Երևանի
առևտրի և գոյցէ այդ նահանգի հարուստ ար-
դիւնաբերութեան գործի հետ: Թէ ինչ գրամա-
կան յարմարութիւններ է տալիս պետական բան-
կը ընդհանրապէս առևտրական և արդիւնաբերա-
կան գործողութիւններին,—այդ մասին մենք մի-
անգամայն աւելորդ ենք համարում խօսել, քանի
որ պետական բանկի գոյութեան հիմունքները
չառ լաւ յայտնի են:

Բայց մենք չենք կարող լուրսիւն տալ յառ-
կապէս այն հանգամանքները, որոնցով շրջա-
պատված են ներկայումս Երևանի առևտուրը և
արդիւնաբերական ձեռնարկութիւնները, և որոնք
մեծ խոչընդոտներ են ներկայացնում, դրամի պա-
կասութեան և դժուարութեամբ ձեռք բերելու
պատճառով:

Ընդհանրապէս Երևանի առևտուրը, որը կարե-
ւի է ասել կապ ունի համարեա ամբողջ նահան-
գի:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅ ԱԶԳԱԳՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

Պետերբուրգում հրատարակվող «Արքայ» հան-
դիսի Բ. գրքում մենք գտնում ենք երկու յօդուած
«Ազգագրութեան վերաբերութեամբ». մէկը խմբա-
գրական յօդուածն է, միւսը գրված է իբրև քննա-
դատութիւն պ. Խալաթեանի «Մարդիկ հայ ազ-
գագրութեան և ազգային իրաւաբանական սո-
վորութիւնների» վերնագրով գրելի:

Խնդրի մեծ կարևորութիւնը իրաւունք է տա-
լիս մեզ մի քանի դիտողութիւններ անել, որոնք
գուցէ դարձնեն հասարակութեան ուշքը ինքնա-
հանապազմեան անհրաժեշտութեան վրա:

Նախ հարկաւոր ենք համարում պարզօրէն բա-
ցատրել, թէ ինչ է մեր ուսանելի առարկան, ո-
րովհետեւ թէ պ. Խալաթեանի առաջաբանում,
և թէ «Արքայ» յիշեալ յօդուածում մենք մոլթ
կէտեր ենք տեսնում այս խնդրի վերաբե-
րեալ: Յետոյ արդէն մենք կը խօսենք միջոցների
վրա:

Մեր կարծիքով, դիտական մտքերը ժողովր-
դականացնելու համար անհրաժեշտ է պարզ հաս-

գի հետ, շատ դանդաղ, շատ անկանոն կերպով
է կատարվում, միմյան դրամի բացակայութեան
պատճառով: Վաճառականը հարկաւոր չըլանա-
ռութիւնների համար փող գտնել անկարող է Ե-
րևանում: Ֆինանսական հիմնարկութիւններ Երե-
ւանում չը կան. այնտեղ գոյութիւն չունի ոչ մի
բանկ: Այլ դրանց փոխարէն գոյութիւն են ունե-
ցել զանազան, այսպէս կոչված բերօններ, որոնք
վերցրել են 60—80 տոկոս, հարստահարելով ի-
րանց դիմողներին, և զանազան մասնաւոր վաշ-
խառներ, որոնց ձեռքին են նայում ոչ թէ մի-
այն մանր աստիճանաւորները և մանր գործար-
ները, «մանկիւն մի մանկիւն չա՛հ վճարելով», այլ
և նոյն իսկ Երևանի առևտրականները մի նշա-
նաւոր մասը:

Դրամական շրջանառութեան այդ դժուար
պայմանները մեծ ազդեցութիւն ունեն և դաւա-
ռի արդիւնաբերութեան գործի վրա, որը ընդ-
հանրապէս, ինչպէս յայտնի է, ընկած գրութեան
մէջ է:

Անկարելի է չաւտել ֆինանսական մինիստ-
րութեան այդ մտադրութիւնը, քանի որ, կրկնում
ենք, Երևանը, իր այժմեան հանգամանքներով, իր
առևտրական և արդիւնաբերական պայմաններով,
վաղուց կարևորութիւն ունի ֆինանսական մի-
նիստի հիմնարկութեան:

Մենք կարծում ենք, որ ինքը Երևանի հաս-
րակութիւնը եթէ կամենայ, կարող է իր քաղա-
քային ինքնավարութեան միջոցով աւելի դարկ
տալ այդ հարցի իրագործվելուն: Ղեկնելով այնպի-
սի միջոցների, որոնք կարող են շտապեցնել ֆի-
նանսների մինիստրութեան այդ մտադրութեան
իրականացումը:

ՆԱՍՏԱԿ ԶԱՀՈՒԿԻՑ

Թուլիսի 30-ին

Ջահուկ գիւղը այս տարի սարսափելի անձրե-
ներից ու հեղեղներից կրեց սաստիկ վնասներ,
ինչպէս և միւս շրջակայ գիւղերը: Յօրենի արտե-
րը, որոնք գարնան սկզբին առատ հունձ էին
խոտտանում, յորհաճոս անձրևների, անընդհատ
փչող սառը քամիների ազդեցութեան տակ, զգա-
լի կերպով վնասվեցան, այնպէս որ, գարնան ըս-
կալին ապագայ առատ հունձի յոյսերով լցված
գիւղացին, այսօր իր յոյսերը խաբւած տեսնելով,
այժմանից իսկ զարհուրում է, իր ապագայ վի-
ճակը աչքի առնող բերելով:

կանալի ոճով գրել, և որը գլխաւորն է, չը միախ-
չել մանրամասնութիւններէ: Երբեմն ստիպված
ենք այլեւից սկսել որպէս զի մեր գրածը հաս-
կանալի լինի ընթերցողին: Հաւաստի ենք, որ պ.
Խալաթեանի գրքի առիթով գրած յօդուածը աւե-
լի նշանաւոր և օգտաւէտ կը լինէր ընթերցո-
ղին, եթէ հեղինակը չը մոռանար, որ նա հայ
հասարակութեան համար է գրում և ոչ թէ հայ
գիտնականների, որոնք օտար աղբիւրներից կա-
րող էին աւելի ընդարձակ տեղեկութիւններ քա-
ղել ազգագրութեան մասին:

Այն դիտողութիւնները, որոնց նպատակն է ու-
սումնասիրել մարդը, այսինքն քննել նրա ֆի-
զիկական կազմուածքը (անատոմիա), նրա մար-
մնամասերի և զգայարանների զանազան օր-
գանների պաշտօնավարութիւնը (ֆունկցիա)—
(ֆիզիոլոգիա), նրա մտաւոր կեանքի արտայայ-
տութիւնները (հոգեբանութիւնը), նրա հիւսնաբո-
ւթիւնները (պատալոգիա)—այս դիտողութիւնները
ուսումնասիրում են մարդուն, իբրև անհատի,
համեմատելով նրան միւս կենդանիների հետ:
Այսպէս մենք ծանօթանում ենք մարդու ֆի-
զիկական և մտաւոր կեանքի հետ, ինչպէս այդ
անում ենք միւս կենդանիների բաժանմունքների
վերաբերութեամբ, ինչպէս թռչունների, ձկների, մի-
ջատների: Այս տեսակետից մարդը ուսումնասիր-
վում է միւս կենդանիների շարքում, և մարդագի-

Սյո լաւաւան չէ, վրա հասնում կապոյտ հաղը,
ծաղիկը և կարմրակը, որոնք յափշտակում են
հայրերի դրկից անմեղ մանկանց և տանում են
սառը գերեզման, այնպէս որ այս երկու ամուլայ
ընթացքում երկու հարկերից աւելի երեխաներ
մտել են գերեզման և նահապետական պարզ կե-
ցութեան մէջ: ապրող ժողովուրդը, փոխանակ
մաքաւելու այդ ցաւերի դէմ, դիմելով հմուտ բը-
ժիշկների, դիմում է այս կամ այն սուրբի, այս
կամ այն խաչի օգնութեան, բերել է տալիս
«Հազարափրկիչ» օր. Կարապետի մատուցը», մա-
տաղներ է անում, պատարագ է մատուցանում,
թափօր է ելանում և ծնկաչոք աղաչում է ազա-
տել իր անմեղ մանկանց մահուան գրկից, բայց
իր բոլոր յոյսերը ի դերե ելած տեսնելով, չէ խը-
րատվում: Եւ չէ՛ք դիմում: Դիմում է մի այլ
մտադրապաշտական միջոցի, այն է ծակում է
գիւղիս մէջ գտնված օր. Յակովբ հայրապետ կոչ-
ված վրած եկեղեցու պարիսպը և իր երեսային
այնտեղից անցկացնելով՝ օգնութիւն է խնդրում.
այդպէս է անում, որովհետեւ հաւատում է նա-
խապաշարված կնոջ խօսքին, որին երազում իբր
թէ սուրբը երեսպից է և այդ յայտնել է... Նա
լուր է, որ թուրքաց գերեզմանատանը գտնվել
է մի գերեզմանաքար, խոյի նմանութեամբ, և ի-
բրը թէ այդ խոյը երեսպից է մի թուրք կնոջ Ե-
րազում և յայտնել է նրան մահանալ է տըր-
ժիշկ վերոյիշեալ հիւանդութիւնների. պէտք է
բերին հիւանդացող երեխային, անցկացնեն խոյի
տակից և ժողովուրդին էլ թէ հայ, թէ թուրք ա-
մենայն միամտութեամբ կատարում է այն ամե-
նը, ինչ որ նրան ասում է թրքուհի պատգամա-
խօսը: Բայց այդ բոլորն էլ չէ օգնում: Չին օդ-
նում նրան նոյնպէս Պարսկաստանից գաղթող
զանազան բաղաձայնների կամ, ինչպէս ասում
են «չաթիւնը անհասանելի» գրքերը և թալիսման-
ները, որոնց ժողովուրդը դիմում է ամենայն եր-
կիւղածութեամբ, և ահա ինքն ժողովուրդը յու-
սահառութեան մէջ հաւաքում է. «Աստուած մեզ
վրա բարկացել է, այդ մեր մեղքն է, որ Աստ-
ւած մեզ երեսին է տալիս, փառք իրան ողոր-
մութեան, էլ ինչ ճար ունենք, ինքն ողորմայ...»

Ս.

ՆԱՍՏԱԿ ԽՄԲԱԳՐՈՒՆ

Գանձակ, 6 օգոստոսի

Պատուական թերթի № 87-ում տպված Գան-
ձակից գրված նամակում, դիտութեամբ թէ ա-

տութիւնը կենդանաբանութեան մի մասն է կազ-
մում: Այս բրօկայի կենդանաբանական
մարդաբանութիւնն է:

Բայց մարդկութիւն կազմող անհատները (մար-
դիկ) բոլորը միմյան չեն թէ իրանց ֆիզիկա-
կան կազմութեամբ և թէ մտաւոր զարգացումով:
Այն հիմնական առանձնայատկութիւնները,
որոնք բաժանում են մարդկութիւնը միւս կենդա-
նիների դասից յատկանիշ մնալով հանդերձ մար-
դու, իբրև անհատի, մարդկութեան այլ և այլ
ցեղերը (օր. դանազան երկիրներում բնակվող
աղբեր) տարբերվում են միմեանցից երկրոր-
դական (օր. դանազան երկիրներում բնակվող
աղբեր) տարբերվում են միմեանցից երկրոր-
դական յատկութիւններով: Ինչպէս թռչունե-
րի, կամ ձկների մէջ մենք զանազան տիպեր ենք
գտնում, նոյնպէս և մարդկութեան այլ և այլ բաժին-
ները տարբերվում են միմեանցից բազմաթիւ երկ-
րորդական առանձնայատկութիւններով: Այս երկ-
րորդական առանձնայատկութիւնների ուսում-
նասիրութիւնը կազմում է իսկապէս մարդաբա-
նանսութիւնը (անտրոպոլոգիա): Նա ուսումն-
նասիրում է ծարրկութիւնը, որոնք է նրա այլ
և այլ ցեղերի առանձնայատկութիւնները, այս
ցեղերի մէջ եղած թէ ֆիզիկական և թէ մտաւոր
տարբերութիւնները և այս տարբերութիւնների
վրա հիմնվելով բաժանում է մարդկութիւնը ցեղ-
երի, աղբերի և ընտանիքների, «ուսումնասիր-
վով առանձնապէս իւրաքանչիւր ցեղի (espèce) և
եթէ հարկաւոր է իւրաքանչիւր տոհմի (genre) սո-

կամայ՝ սպրդված էր մի սխալ, որը վերաբեր-
վում էր Ս. Լուսաւորիչ եկեղեցու երեցիփոխանին,
որի մօտ, նամակազրկ կարծիքով, վեց տարուց
ի վեր գտնվում է «աղբատանոցի խոշոր գոմարը
առանց գրաւականի»: Իբրև վերոյիշեալ եկեղեցու
միաբան և երեցիփոխանի հաշիւներին լաւ ծանօթ,
յայտնում եմ ի դիտողութիւն յարգելի հասարա-
կութեան, որ այդ գոմարը գտնվում է՝ ոչ թէ
Ս. Լուսաւորիչ եկեղեցու, այլ Ս. Յովհաննէս ե-
կեղեցու և ոչ նոր ընտրված, այլ հին երեցիփո-
խանի մօտ: Ուստի շատ ցանկալի էր, որ նամա-
կազրկը իր ծանր ու բարակ զեկուցման ժամա-
նակ սխալ տեղեկութիւններ չը տարածէր:

Յոյս ունեմ, որ թերթիդ առաջիկայ համարնե-
րից մէկում տեղ կը շնորհէր երկտողիս, կասկա-
ծողներին եռոճիկօ մատաւորու հետ:

Սիմէոն Բահանայ Տէր-Խաչատրեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մի քանի ժամանակ է արդէն, որ Բագուում
հրատարակվող «Կապի» ռուսերէն լրագիրը ան-
ցեղ է նոր խմբագրութեան ձեռքը: Նոր խմբա-
գրութիւնը զգալի կերպով փոփոխել է լրագրի բո-
վանդակութիւնը, հանելով նրան այն ընկած և
անհամակրելի դրութիւնից, որի մէջ «Կապի»
գտնվում էր նախորդ հրատարակչի օրով, և որը
լաւ յայտնի է ընթերցող ռուս հասարակութեանը
և մանաւանդ բաղաձայններին: Ցանկանում ենք,
որ այդ լրագրի նոր խմբագրութիւնը շարունակի
իր այժմեան համակրելի ընթացքը, անկողմնա-
պահ կերպով նուիրելով տեղական հարցերի ու
սոսնատիրութեան և մշակման:

«Արձագանքի» վերջին, № 30-ի մէջ տպված է
«Չինտորագրութիւն» վերնագրով յօդուածը: Յօ-
դուածաւորը հաւատարմութիւն է, որ այդ յօդուածը
կազմելիս նա օգտու է քաղել «ՄԻՏԵԼ» ամսա-
գրից, բայց աւելի ճիշդ կը լինէր ասել թէ ամ-
բողջովին թարգմանել է ռուսերէնից և այն էլ
յիշեալ ամսագրի հին համարից: Յօդուածի նպա-
տակն էր ժողովրդացնել, ժողովրդին մատչելի
դարձնել մի այնպիսի օրէնսդրութիւն, որը ահա-
գին նշանակութիւն ունի ժողովրդի համար:
Սակայն յայտնի է որ ընդհանուր ղեկավարա-
գրութիւնը մտքած է եղել Ռուսաստանում
1874 թվին հրատարակված կանոնադրութեամբ:

վերութիւնները (moeurs, нравы), ընդգրկումները,
արուեստագիտութիւնը, կեանքը, նրա աշխարհա-
գրական տարածումն (ինչ տեղեր են բնակվում)
թէ ներկայումս և թէ անցեալում (բրօկա):»

Մարդաբանութիւնը բաժանվում է, ըստ Բրո-
կայի, երեք մասի, որոնցից մեզ հետաքրքրում է
միայն երկրորդը, այսինքն ազգաբանութիւն-
ը (էթնոլոգիա կամ նկարագրական մարդաբան-
ութիւն): Այս գիտութիւնը, մարդկային այլ և այլ ցեղերի
մէջ մի քանի առանձնայատկութիւններ գտնելով,
բաժանում է մարդկութիւնը խմբերի: Այս առան-
ձնայատկութիւնները բազմաթիւ են. գաղաթի-
զանազան չափերը, դէմքի դիրքը, ծնունդի ձևը,
կաշու և մաշկի գոյնը, անդամների համեմատա-
կան չափը և այլն: Սոցա չարքումն են և զանա-
զան զգայարանների (տեսողութեան, լսողու-
թեան) սրութեան աստիճանը, միջակ կենսաբ-
երկու սեռերի հատկութեան միջակ ժամանա-
կամիջոցը, և այն բոլոր տարբերութիւնները, որոնք
նկատվում են այլ և այլ ցեղերի հասարակական
կեանքի, նրանց ղեպի առաջադրվածութիւնը ունեցած
ձգտումների, մի խօսքով նոցա մտաւոր և բարո-
յական կեանքի մէջ: Այս տարբերութիւնների
վրա հիմնվելով անտրոպոլոգները (ժողովրդագրե-
րը) բաժանել են մարդկութիւնը մի քանի տիպե-
րի, ինչպէս կովկասեան, եթիոպեան, մոնղոլեան
և ուրիշ:

տեղեկութիւն մեզ կը բերեն: Եւ բարոյականքը Այնպիսի տեղեկութիւններ կը պատմեն որ մարդ ականջները խցել կուզէ. և լսելիքը այնպիսի անձերէ, ոյք կատարելապէս վստահութեան արժանի են:

Եւ ինչ կուզէ որ ընէ այդ եպիսկոպոսը, իւր անցեալը Պօլսոյ մէջ ծանօթ է, իւր ազդեցութիւնն յայտնի Սակայն ասիական քաղաքագէտ մ'է, լաւ կը խօսի, կը շողորդի, գիտէ մեծերուն առաջ խոնարհիլ: Այնչափէս եթէ այսօր ժողովուրդին հարցուն, անհաւանքն է ամբողջ հայոց մէջ — ինչպիսի դատուն մէջ — գտնել հարկու անձ, որ քուէ տան Բարթողիմէոսի: Եւ այս անձն է, զոր կուզեն մեզ Պատրիարք ընել:

Եւ պաշտպանները: — Ամենքն ստոր. թիւը թերթերն են, որ կուզեն ըսելի զնա մեր գլուխն անցնել: Թիւը խմբագիրներն են, ոյք ամէն ուրեք սպառնալիքներ կը տեղան անոնց դէմ, որք կը հակառակին Բարթողիմէոսի: Եւ եթէ Տէր մի առաջ յաջողի Բարթողիմէոս, ալ այնուհետ հայ եկեղեցականն ուրիշ կէտ նպատակի չը պիտի ունենայ, բայց եթէ մոռնաւ ազգն և հաճոյ լինել օտարաց: Չեմ գիտեր թէ այս անձնաորութիւն պիտի հարկադրէ զմեզ վերստին գրել: Ամեն առանձն, որ պատրիարքական ընտրութեան խնդիր ծագած է եօթ-ութ տարի ի վեր միշտ գրած ենք այս անձին վրայ «Մշակի» մէջ: Իցէ թէ վերադառնալու հարկ չըլլար:

Այս միջանկիւլ գլուխն փակելով, անցնենք դարձեալ մեր խնդրոյն:

Ինչ է այդ ներքին կանոնադրի խնդիրը: — Ազգ. ժողովը տան և չորս տարուան փոքրաւորութիւնէ վերջ տեսաւ թէ դժուար պիտի լինի, մինչև իսկ անկարելի, կանոնադր կերպով դրած տեսնել ուսանց ունենալու որոշ կանոններ իւր ներքին գործերու համար և յաճանկց Ռուսիոյնանի պատրաստել կանոնադր գործ մը: Ռուսիոյնանի զայն պատրաստեց և այդ օրէն ի վեր բաւական կանոնաւորեցան Ազգ. ժողովը գործերն: Մի քանի օրինակներ տանք: Սահմանադրութիւնը կը տրամադրէ թէ մինչև որ 71 անդամը ներկայ չըլլան — ժողովականքը 140 լինելով անտեսը բացառելու օրինաւոր թիւն է կէսէն մէկ անկի — տեսնաւ չը բացառի, բայց արարելու ընթացքին մէջ տեսնուեցաւ թէ շատ անգամ 70 երեսփոխանք ներկայ չըլլային և նիստը չէր բացուեր, վասն զի մէկ երեսփոխան պակաս էր Ռուսիոյնանի ասոր դարմանը գտաւ: — Երբ 71 երեսփոխանք ներկայ լինեն քանի ձայն կը բաւէ օրինաւոր որոշումը տալու համար: — 36 ձայն: — Ներկայներու կէսէն մէկ անկի ձայնով Ազգ. ըստ Ռուսիոյնանի կանոնադրի, Ազգ. ժողովը մէջ երբ 71-էն պակաս անդամք ներկայ լինեն, բայց անոնցմէ 36 ձայն միասնա՝ նիստն օրինաւոր է: — Իսկ եթէ նիստին 71-էն անկի անդամք գտնուին, այն ատեն ներկայի թիւէն կէսէն մէկ անկի:

Յետոյ նկատելով որ միշտ 140 անդամ չունի Ազգ. ժողովը, զի հրաժարեալք, մեռեալք, բացակայք կը դնուին, Ռուսիոյնանի ասոնց համար ալ կարգեր, կանոններ դրաւ, այնպէս որ չնորհիւ այս ամենուն 14 տարի է հալիւ թէ երկու երեք անգամ պատահած է — և այն ալ գէշ օրի պատճառաւ որ Ազգ. ժողովն ի նիստ հրաւիրուի և նիստը չը կարենայ ընել:

Ուրիշ խնդիր մ'ալ կար. շատ մը երեսփոխաններ նիստերու ներքին չեն գտնուիր. միայն մեծ օրերու համար կը պահեն իրենց ներկայութիւնն և այդ օրերն էին Պատրիարքական ընտրութիւն, ժողովականաց ընտրութիւն, կնճառից և կրքեր յարուցանող խնդիրներ. իսկ օգտակար բայց հանդարտ նիստերու ներկայից թիւը քիչ էր, արդ ըստ ներքին կանոնադրի երեսփոխան մը որ երեք անգամ իրարու վրայ նստի չը դար — ասանց օրինաւոր պատճառով — չորրորդ բացակայութեան հրաժարեալ կը համարուի: Այս օրէնքով ժողովականքը քիչ բացակայ կը դնուին, ամեն նստի բաւական թիւով երեսփոխանք կուզան:

Կան նաև ուրիշ կանոններ որոց մասին շատ երկար է գրել: Ինչ և է տան և չորս տարի է որ կանոնաւոր կը թմանանք, բայց կան մի քանի երեսփոխաններ, պետական ծառայութեան մէջ գտնուող, որք չեն անդրժիր այս կանոնաւոր ընթացքն. ատոնց նպատակն է բոլորովին ջնջել Սահմանադրութիւնը, և այս նպատակին հասնելու համար կուզեն որ երեսփոխաններու բացակայութեամբ, անգործութեամբ ժողովը ինքնին կազմալուծուի, բայց տեսնելով որ չնորհիւ ներքին կանոնադրի այս բանս չըլլար այժմ կուզեն որ նախ ներքին կանոնադրը խափանել տան և ա-

յա ժողովը աստիճանաբար կազմալուծել: Խառն ժողովը ընտրած քանձաժողովը չաբաթ՝ օրը իւր նիստն ըրաւ — ատաջին վերջին — և որոշեց իւր կարծիքն հաղորդել Խառն ժողովը այն է թէ ընտրութիւնը օրինաւոր են, ազգ. այսպէս կը համարի, իսկ ներքին կանոնադրը խրկել կառավարութեան, վասն զի ամէն կանոն պէտք է կառավարութեան ծանօթ լինի: — Ինչ որ ճիշտ է, ժողովներու ներքին գործերուն չը խառնուի Գուռը, թէ իսկ չա՛ մը ունենար մինչև հիմա խառնուած էր:

Սակայն ուրիշ կասկած մը ունենք: Երուսաղէմի խնդիրը կայ. արդէն ուրիշ ատեն գրած եմ թէ ինչպէս Յարութիւն պատրիարք միտք ունի Երուսաղէմ անջատել Պօլսէն, արդ Երուսաղէմի Միաբանութեան խնդիրը՝ իսկ տեսնելք այս ամենուն ներքեւ: — Գարձեալ տակն ու վրայ պիտի լինենք Երուսաղէմի համար:

Ներքին կանոնադրի և Երուսաղէմի կանոնադրի միջև եղած յարաբերութեանց մասին անհիշէ որ հրատարակուեցաւ «Մատիս» ամսաթիւթի մէջ:

«Այս և ուրիշ խնդիրներու մէջ կառավարութեան տեսակէտները տարբեր են. կառավարութեան տեսակէտները կը փոխուին նաև այն ժամանակ երբ մենք մեր մէջ գտնուինք, կառավարութիւնը խաղաղութիւնն հաստատելու համար կը միջամտէ: Բայց երբ մենք մէջենիս չենք կուտի, երբ կառավարութեան տեսակէտնց հակառակ գործ մը չենք ընել, այդպիսի ներքին կանոնադրի երկրորդական խնդիրները կարևորութիւն մը չեն ունենար: Սակայն գուցէ ուրիշ հեռանկարով մը ունենան այն հայեր որք ինչ թէ՛ անցեալ տարի Մէրէմ-Գուլի Գարութիւն էֆէնտի երբ Ազգ. ժողովը Ատենապետ էր, նախորդ Գաղ. ժողովը մի առաջարկը բերաւ Ազգ. ժողովին: Այդ առաջարկն էր Երուսաղէմայ վանքի կանոնադրը կառավարութեան վաւերացնելու և ոչ իսկ նկատողութեան առնուլ ուղից, ինչն այսպիսի խնդիրներու մէջ վերջին հեղինակութիւնն է. այդ օրը Մէրէմ-Գուլի էֆէնտի այդ խնդիրը չը վերցրէր Ազգ. ժողովը օրակարգէն:

Երուսաղէմայ Միաբանութիւնը կամ լաւ ևս Յարութիւն-Սիմէոն միաբանութիւնը Ազգ. կնիք. իշխանութեան լուծը թողնուաւ փափագ ունի, զայս Տ. Գարութիւն Պատրիարք լաւ գիտէ, և քանի մը անգամ ալ բերնէն փախուցեր է: Այդ անջատման առաջին և ամենէն կարևոր քայլն է Երուսաղէմայ վանքի կանոնադրին իբր կառավարական օրէնք նկատել տալ: Գարտնի է թէ վերջին կանոնադրին որ վաւերացուեցաւ Ազգ. ժողովը կողմանէ այնքան կը համապատասխանէր Տ. Գարութիւն Պատրիարքի և Սիմէոն եպիսկոպոսի փափաքներուն և կարծեաց՝ որ կուզեն զնա լաւ մը ամրապնդել վանիստով որ Ազգ. ժողովը ոչ շատ ուշ կը բարեփոխէ այդ կանոնադրին որ հաւանքովք վերջին աստիճան անախորժ է նոյն իսկ Երուսաղէմի Միաբանութեան, արդ այս վրտանդին առաջը կրնան առնուլ Գարութիւն-Սիմէոն Սրբազանք մէկ եղանակաւ, այն է վաւերացնել տալով այդ կանոնադրը կառավարութեան, բայց որովհետև այդ խնդիրն այժմ չեն կրնար ուղղակի յարուցանել, պէտք է որ անուղղակի միջոցներով հասնին իրենց նպատակին: Ամէն ճանապարհ Երուսաղէմաւորն կը տան: Գիտենք թէ ինչ սերտ յարաբերութիւններով կապուած են Գարութիւն Պատրիարքը, Սիմէոն Տեղապահ, Դուռեան և Մէրէմ-Գուլի էֆէնտիք և «Տողի Երուսաղէմայ ի վերայ նոցա»:

Անոնք որ կը յուզին թիւ դժբերէի խնդրով դադանեաց թափանցելու լաւալիներէն մին ալ թիւղ համարեն Երուսաղէմայ կանոնադրին և չենք կարծել որ շատ սխալին, թէպէտև կը փափաքէին սխալիլ:

Հայկակ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Կ. Պօլսից հաղորդում են մեզ հետեւեալը: «Կ Պօլսոյ Պերայի արտարձանին հայոց մէջ յուզում կը տիրէ: Եկեղեցւոյն թաղական խորհուրդը կուզէ վաճառել եկեղեցւոյն կալուածներէ վաթսուս հազար բուլլի արժողութեամբ կալուածներ. Պերայի ժողովուրդը դիմելով որ այդ թաղ խորհուրդն առժամայե թաղ խորհուրդ մ'է և թէ այդ վաճառումներ անպատու են եկեղեցւոյն կը բողոքէ հօրապէս»:

«Berliner Tageblatt» լրագրի տեղեկութիւնն:

ըլ համեմատ, այս օրերս հրաժարական կը տան իրանց պաշտօններէր գերմանական ինն դեներալներ, որոնք թուում և դեներալ ֆոն-Բլումֆորտը: Այժման ղեկավարական միջնորդ դեներալ Բրոնզար ֆոն-Շէլլենդորֆ կը նշանակվի առաջին դորաբանի հրամանատար: Գերմալ Գանիլ ղեկավարական միջնորդ է նշանակվում, իսկ դեներալ Ֆոգել կուն Վալդեբրէկ օգնական կը նշանակվի: «Standard» լրագրին հետագրում են, որ Խորհրդում մեծ անկարգութիւններ են սկսվել: Մէջոլում դեներալը զօրքերը, ուսիկ չը ստանալու պատճառով, կողոպտեցին քաղաքը, որի ժամանակ մի քանի բրիտանական սպանվեցան:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Առաջիկայ 1889 թին Ֆրանսիայի Մոնպելիէ քաղաքի համալսարանը տնկել է իր գոյութեան 600 ամեակը: Այդ տոնակոթութեանը հրաւիրված կը լինեն ոչ թէ միայն Ֆրանսիական, բայց և օտարերկրեայ համալսարանների ներկայացուցիչները:

Այս օրերս սկսեց հրատարակվել փարիզում մի նոր ուսումնական ամսագիր, որը գլխավորապէս նուրբում է կանանց հարցի պաշտպանելուն: Ամսագրի վերնագիրն է «Revue scientifique des femmes» և նրա մէջ աշխատակցում են մեծ մասամբ քննադատներ, ներկայացուցիչներ: Ամսագրում կը տպվեն և արժանաւորվանց յօդուածները, որոնք վերաբերվում են այն հարցերին, որոնց յարուցել են կանայք: Այդ ամսագրի յուշի տեսարակը պարունակում է իր մէջ ուշադրութեան արժանի յօդուածներ:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍՏՈՍԱՅԻՆ ԳՈՐԾԱՅԻՆՈՒԹԻՒՆՆԵՐ

10 օգոստոսի: Բրիտանական կառավարութիւնը տեղեկութիւն տուցաւ, որ հիւսիսային Աֆրիկայում ծանր ապստամբութիւն ծագեց, որին, որպէս կոմպարտէն, մասնակցում է բալխանի նահանգապետ իշակ-խան: Ապստամբութեան տեղը, Մայմէնում գործել են ուղարկված Հէրապից:

ՎԻԵՆՆԱ, 10 օգոստոսի: Լուրում է, որ Կրիստի Զերգերիստուէկց կերթայ Լոնդոն մարկիզ Մայլորիին այցելելու համար: Գլխավորապէս կան չըջաններում այդ լուրը անհաւանական են համարում. շատ կարծիք է Կրիստի ցանկանում էլ է այդ ճանապարհորդութիւնն անել, բայց իշխան Բիւմպի, Երկի, կարգել է այդ:

ՆԻՃՆԻՆՆՈՎ ԳՈՐԾՈՒ, 11 օգոստոսի: Գործերի ընթացքը տոնավաճառում ձգձգվում է պողաքերութեան հետանցների ու յայտնվելու և մուրհակային կուրսի տատանման պատճառով: Մահաւորապէս այսպիսիները անցեալ տարվանից քիչ են բերված տոնավաճառում: Գները նըջանակվում են նոյնը, ինչ որ Մայիլայումն ունէին, բայց մի քանի մասնափախուրային ֆերմաները, որոնք բաւական ցածրացրել են իրանց գըները, որ բացատրվում է դրամական դժուարութիւններով: Վչեայ արդիւնները լաւ են ծախվում: Թէյի առևտուրը նոյնպէս դեռ կատարելապէս չէ պարզվել: Բայց, որպէս կարծում են, անուցեալ տարվայ պէս չահաւում չի լինի. կէսիստեան թէյ ծախվեց 122, 135 բուլլոց մինչև 149 բուլլ արկղը, խանկոտեան թէյն ծախվեց արկղը 145-ից մինչև 155 բուլլ, 12 միւնիերի ժամանակավիշտով: Մանրեք ապրանքների գործերը դեռ ևս չեն պարզաբանված: Սպասում են երկաթի լաւ առևտրի և դինը որոշում են 5-ից մինչև 10 կ. պուլի համար և առևտրի թանգ: Երկաթալաճանքի ազատ առևտրին արդեւում է բարձր ջուրը, որ նորից բարձրացել է, որի պատճառով առևտրականների մի մասը թողել է ապրանքները նաւերի վրա: Յոյս ունեն, որ նաւերի լաւ առևտուր կը լինի, բայց դները դեռ ևս չեն որոշված: Չլան առևտուրը, որ անուցեալ տարվանից քիչ է եկած, աշող է գնում, բայց շատ բարձր գնով: Հացի առևտուրը հանդարտ է. ծախիւները ձեռնպահ են լինում, սպասելով, որ դինը կը բարձրանայ: Շողիւնաւտները և հայթայթողները դանդաղում են վատ գործերի վրա. ֆրախտեքը ցածր են. եղանակը անձնապէս է:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 11 օգոստոսի: Գերմալ-աղիւտանա Պետար Մերդերին չնորհված է ու Վալալիլի շքանշանը 1 ատոիճանի: Բժիշկ Կրէյպել-Խէր, որը մեղադրվում է հիւանդին հիւանդանոցում

չընդունելու համար, սենատի քրէական բաժնին մի գանգատ ներկայացրեց նահանգապետ դատարանի վճիռը ոչնչացնելու վերաբերմամբ: Կրէյպել-Խէր ապացուցանում է, որ դատարանի վճիռը համաձայն չէ սենատի պարզաբանութեան հետ: «Journal de St. Petersburg» լրագրը հերքում է Բերլինի մի երկրորդական դործակալութեան հաղորդած տեղեկութիւնը այն բանի մասին թէ արտաքին գործերի միջնորդը ընդունել է արխիւնացի դեսպաններին և որ վերջինները առաջարկել են յիշանել Ռուսաստանին մի ինչ որ կղզի: Այդ լուրը կատարելապէս սուտ է: «Нов. Вре-мя» լրագրը հաղորդում է, որ Ֆրանսիայի հետ լաւանկցութիւնները Ռուսաստանից անասուններ, ոչնաւներ, խոզեր և խոզային արդիւններ արտահանելու համար դաշնագիր կապելու վերաբերմամբ վերջացած են: Նոր դաշնագրի համաձայն, ռուսաց արդիւնաբերողները և դիւղատնտեսները նշանաւոր առաւելութիւններ կունենան, որոնք մանաւանդ նշանաւոր են խոզային արդիւնների արտահանութեան դործում, 100 կիլոգրամ խոզի մսի վրա 8 ֆրանկ 50 սանտիմ այժման մարտահարկի պակասեցնելու պատճառով:

ԼՈՆԴՈՆ, 11 օգոստոսի: Երէկվայ թիւը «Բէյ-տերի» գործակալութեանը հետագրում են Սիււա-յից, որ Աֆրիկական Տուրկեստանի դեներալ-նահանգապետ իշակ-խանը չը հնազանդվեց էմիրի հրամանին՝ դեալ Գարուլ և այժմ, որպէս ասում են, սկսեց յանդուգն կերպով գործել: Գործերի մի մասը յետ կանցնեց իշակ-խանից և էմիրի կողմնացաւ: Մայմէնի բերդապահ գործը վայր դրեց իշակ-խանին: Բերդապահ գործի ցանկութեամբ, որը նոր նահանգապետ էր պահանջում, Հէրապի նահանգապետ Մայմէն նահանգապետ ուղարկեց գլխաւոր հրամանատարի եղբորը Ուինչ պատե-րազմ չեղաւ և էմիրի իշխանութիւնը Տուրկեստանում, ըստ երևոյթին, ապահոված է:

ՆԻՃՆԻՆՆՈՎ ԳՈՐԾՈՒ, 11 օգոստոսի: Վճարումներ կանոնաւոր կերպով են կատարվում: Խվա-նովեան անուամբ ստորին և միջակ չիբերը ծախվեցան գների յաւելմամբ: Ահաւարակ չըթի առևտուրը լաւ է գնում: օգոստոսի 2-ին և 3-ին բարձր չիբեր համար եղած դիւլումը Ֆիւսաւար կերպով աղից: Գնողները յետ էին կանոնում և գործի շարունակութիւնը խափանեցաւ: Մահաւոր ապրանքների առևտուրը տարուց տարի վատ է դնում: Միջին-ասիական բամբակը դեռ ևս ճանապարհի վրա է: Աղուամազի ապրանքները լաւ կը ծախվեն: այդ ապրանքները գնելու համար եկել են արտասահմանեան գնողներ. լաւ գների են սպասում: վատ եղանակի պատճառով մանր առևտուրը հանդարտ է:

ՕՐԵՆԲՈՐԳ, 11 օգոստոսի: Այստեղ մեծ հըրդէն պատահեց մեծ զամու. ժամանակէ Այդիցան ամբողջ հին թաղը և նոր թաղի մի մասը: Նէս-լիւէլեան կաղէտների ուսումնարանը նոյնպէս շնապեց:

ՎԻԵՆՆԱ, 11 օգոստոսի: Դիւլումաւական չըջաններում ասում են, որ պ. Կրիստի խորհրդակցութիւնները իշխան Բիւմպիի հետ Զերգերիստուէկում վերաբերում են միայն խաղական յարաբերութիւններին Ֆրանսիայի հետ. իսկ սեպտեմբերի սկզբին աստուրութիւն ունեն Բերլինում ժողովել մի քանի ղեկավարող պետական անձները: Այս նպատակով, որպէս ասում են, իշխան Բիւմպի հրաւերներ կուղարկի: Մտքերի փոխանակութիւնը գլխավորապէս կը վերաբերի բողաքական հարցերին: Բողաքական կառավարութիւնը ուղարկում է Սոյցովին Բերլին, որպէս մասնաւոր անձի, հաստատ տեղեկութիւններ ժողովելու համար:

ՕՐԵՆԲՈՐԳ, 12 օգոստոսի: Բոլորը 670 սրահներ են այլով, իսկ աները 1300-ից անել են այլով: Հրկեղեղները դեռեղվել են հրապարակների վրա և դաշտում, մօտ 10,000 մարդկ ա-նապատան են մնացել: Նահանգապետը հիմնում է ժողովրդական օգնութեան մասնաժողով:

ՓԱՐԻՉ, 12 օգոստոսի: Պատասխանելով Մառ-վայի մասին խաղական վերջին յայտարարին, ֆրանսիական կառավարութիւնը յայտարարում է, որ հարցի շարունակ քննութիւնը անօդուտ է և որ այդ հարցի վճիռը պէտք է կախված լինի Բ. Կրան այդ հարցի վրա ունեցած հայացքից:

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԹՐՈՒՆԻ

